

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ՎԵՐՆԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՆԳԼԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ՍԵՂԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ԼՈՒԻԶԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հինգերորդ դարի հայոց պատմագիտական երկերի շարքում<sup>1</sup> առանձնահատուկ տեղ ունի Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը, որի հեղինակը, ներկայացնելով Հայաստանի պատմության (մինչև 5-րդ դար) ամբողջական, ճշմարտացի պատկերը, իրավամբ վաստակել է «Հայոց պատմահայր» պատվանունը: Հայտնի է, որ երկի՝ որպես պատմական հարուստ ու հուսալի փաստերի աղբյուրի հավաստիությունը երկար ժամանակ անասան էր մնում: Սակայն 18-րդ դարից և հատկապես 19-րդ դարի առաջին տասնամյակներից սկսած՝ Խորենացու պատմությունը հետաքրքրություն առաջացրեց Արևմուտքի գիտնականների շրջանում<sup>2</sup>, որոնց համոզմամբ հայոց պատմության ու մշակույթի «իմացությունը» կարող էր համապատասխան պայմաններ ապահովել որոշ երկրների քաղաքական նկրտումներն իրականացնելու համար: Հայագիտության նկատմամբ այդօրինակ հետաքրքրությունը Արևմուտքում ոչ միայն համընդհանուր ճանաչում բերեց հայ հին և միջնադարյան մատենագրությանը, այլև լուրջ առեղծվածներ առաջադրեց հայ պատմաբաններին ու բանասերներին<sup>3</sup>:

Շատ ուսումնասիրողներ, անդրադարձ կատարելով Մ. Խորենացու՝ որպես հայ ազգային պատմագրական ավանդույթի հիմնադրի պատմագիտական-պատմագրական հայացքներին, դրանք որակում են ինքնատիպ և պայմանավորում են նրա ապրած դարաշրջանի առանձնահատկություններով: Հինգերորդ դարում Հայաստանը դարձել էր համաշխարհային պատմագիտական մտքի աչքի ընկնող կենտրոն, և եթե Արևմուտքում առավել տարածում էր ստացել համաշխարհային և համաքրիստոնեական պատմագրությունը, ապա Հայաստանում ստեղծված երկերը հիմնականում նվիրված էին ազգային պատմությանը: Հետևաբար, Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը իր կուռ ու նպատակասլաց կառուցվածքով, հանգամանորեն մշակված ու հղկված մանրամասներով և ստեղծագործական

<sup>1</sup> Տե՛ս Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, **Կորյուն**, Վարք Մաշտոցի, **Եղիշէ**, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին և այլն:

<sup>2</sup> Տե՛ս **Alfred von Gutschmidt**, *Über die Glaub-Würdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren*. Leipzig, Phil.-Hist. Classe, XXIII BD, 1876/ 1892, **Carriere A.**, *La legende d'Abgar dans l'Histoire de Moïse de Khoren*. Paris, 1895, **Toumanoff C.** *On the Date of Pseudo-Moses of Chorene*. *Handes Amsorya*, N 10 (75), 1967, pp. 467-471, **Moses Khorenats'i**, *History of the Armenians /Translation and Commentary on the Literary Sources* by R. W. Thomson. Ann Arbor, Caravan Books, 1978/2006/ և այլն:

<sup>3</sup> Այդ մասին տե՛ս **Ա. Մուշեղյան**, *Մովսես Խորենացու դարը*, Եր., 2007, էջ 12-16:

որոշակի սկզբունքների պահպանումով չէր կարող պատահականություն լինել: Խորենացու պատմագրքում ըստ էության առաջին անգամ համակարգված ներկայացվում է հայոց ազգային գաղափարախոսությունը, որն էլ շատ գիտնականների հիմք է տալիս նրան համարելու առաջին հայ ազգայնականը<sup>4</sup>:

19-րդ դարի 70-ականներից սկիզբ առած գերքննադատության ալիքը ճիգ ու ջանք չի խնայում Խորենացու և նրա «Պատմութիւն Հայոց» երկի ինչպես ժամանակագրական պատկանելությունը, այնպես էլ աղբյուրագիտական հեղինակությունը կասկածի տակ դնելու համար: Այս միտման վառ դրսևորումներից էր ամերիկացի հայագետ Ռ. Թոմսոնի՝ «Պատմութիւն Հայոց» երկի 1978 թ. լույս տեսած և 2006 թ. վերահրատարակված անգլերեն թարգմանությունը<sup>5</sup>:

Մեր ուսումնասիրությունը լայն առումով վերաբերում է երկի անգլերեն թարգմանության մեջ տեղ գտած պատմամշակութային երևույթների լեզվական անհամապատասխանություններին<sup>6</sup>, որոնց շարքում բացահայտվում են ինչպես փաստագրական, այնպես էլ պատմամշակութային արժեք ունեցող լեզվական երևույթների թերի, սխալ, աղավաղված փոխակերպության բազմաթիվ դեպքեր: Այսպիսի աղավաղումներից առանձնակի ուշադրության է արժանի երկի վերնագրի թարգմանությունը:

Հայտնի է, որ որպես տեքստի կառուցվածքի բաղկացուցիչ տարր՝ վերնագիրը տեքստի հակիրճ, խիտ ամբողջությունն է: Այն մի կողմից տեքստի խորհրդանիշն է, որին առաջին հերթին բնորոշ է ճանաչողական գործառույթը, քանի որ հենց վերնագիրն է ազդարարում տեքստային բովանդակության բացահայտման, ընկալման և կանխագուշակման ընթացքը: Մյուս կողմից՝ վերնագիրը տեքստի անվանումն է, որն իր մեջ խտացնում է ամբողջ տեքստային հյուսվածքի հույժ կարևոր կողմը՝ բովանդակությունը, այսինքն՝ առաջին հերթին վերնագրում է արտացոլվում ասելիքի իմաստաբովանդակային ամբողջությունը:

Վերնագրի օբյեկտիվ ընկալման համար առանցքային նշանակություն ունեն նախահայման (prospectio) և հետահայման (retrospectio) կարգերը: Եթե նախահայման կարգի հիմքում ընկած է վերնագրի մասին ընթերցողի նախատեքստային գիտելիքների ձեռքբերումն ու կանխագուշակումը, ապա հետահայման միջոցով ընթերցողը վերնագրի մասին բավարար տեղեկություն է ստանում տեքստն ընթերցելուց հետո: Այս դեպքում վերնագիրը լիարժեք ընկալվում է հորիզոնական և ուղղաձիգ լայն համա-

<sup>4</sup> Տե՛ս **Մ. Մկրյան**, Մովսես Խորենացի, Եր., 1970, էջ 36-37, **Գ. Սարգսյան**, Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Եր., 1991, էջ 6-9, **Ա. Այվազյան**, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն), Եր., 1998, էջ 122-136, **Ա. Թոփչյան**, Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Եր., 2001, էջ 6-7 և այլն:

<sup>5</sup> Թարգմանության ներածական մասում Ռ. Թոմսոնը հիշատակում է երկը գրաբարից թարգմանելու փաստը (**Moses Khorenats'i**, History of the Armenians /Translation and Commentary on the Literary Sources by R. W. Thomson. Ann Arbor, Caravan Books, 2006/):

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ՝ **Ս. Գասպարյան**, **Լ. Գասպարյան**, Թարգմանական «բաց». անփութություն, թե՞ միտում: // Օտար լեզուները Հայաստանում, Եր., 2008, № 3-4, էջ 76-92, **Ս. Գասպարյան**, **Լ. Գասպարյան**, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի անգլերեն թարգմանությունը. համարժեքության հարցեր: // «Վեմ», 2009, № 3 (28) հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 145-156:

տեքստերում, որն էլ ընթերցողին հնարավորություն է ընձեռում բացահայտելու տեքստի բուն բովանդակությունն ու հեղինակի նպատակը: Կառուցվածքային տեսանկյունից վերնագիրն ընկալվում է որպես լեզվական ինքնուրույն տարր, որը նախադրում է տեքստը: Այդուհանդերձ, վերնագիրը կապվում է տեքստի հետ՝ ստեղծելով միաձույլ համակարգ: Ինչպես տեքստը չի կարող առանց վերնագրի լինել, այնպես էլ վերնագիրը՝ առանց տեքստի<sup>7</sup>: Եթե Մ. Խորենացու երկի «Պատմութիւն Յայոց» վերնագրում «Յայոց» միավորը կարող է որոշակի երկիմաստություն արտահայտել (հայ կամ Յայք), ապա այդ խնդիրը միանգամայն հստակ լուծում է ստանում բուն տեքստային հյուսվածքում, որտեղ պատմահայրը ակնհայտորեն նպատակ ունի նկարագրելու Մեծ Յայքի՝ որպես հին հայկական պետության աշխարհագրական, ազգամշակութային, պատմաքաղաքական անցուդարձն ու իրողությունները:

Սակայն կառչելով Խորենացու «Պատմութիւն Յայոց» երկի վերնագրում առկա լեզվական միավորի քերականական ձևի (Յայոց) ընձեռած երկիմաստությունից՝ թարգմանիչը երկի վերնագիրը թարգմանելիս տալիս է «Յայերի պատմություն» փոխակերպությունը՝ իր թարգմանության առաջաբանում հիմնավորելով, որ դասական հայերենում «Յայաստան» աշխարհագրական եզրույթը առավել ընդունված էր թարգմանել որպես հայերի աշխարհ, հայերի բնակավայր: Ակնհայտորեն երևում է, որ երկի վերնագրի թարգմանության հարցում Թոմսոնի դիրքորոշումը հենվում է հայկական իրողությունների թուրքական մեկնաբանությունների ջատագով Էսաթ Ուրասի գաղափարախոսության վրա. «Ամենից կարևոր և անհրաժեշտ են համարում ընդգծել հետևյալը. Յայաստանը չի կարող լինել որևէ այլ բան, քան աշխարհագրության վրա հիմնված հասարակ հիշողություն, տարածք՝ առանց քաղաքական սահմանների»<sup>8</sup>:

Այսպիսով, Ռ. Թոմսոնը, Յայաստան միավորը ներկայացնելով սոսկ որպես աշխարհագրական իմաստի կրող, փորձում է շրջանցել տվյալ եզրույթի այն կարևոր իմաստային երանգը, որ Յայաստանը հայկական էթնոսի բնօրրանն է, և վերջինս դարեր շարունակ ազգային պետականություն է ունեցել այդ տարածքում<sup>9</sup>:

Երկի վերնագրի թարգմանության մեջ Թոմսոնի միտումնավորությունը հաստատվում է նաև ավելի ուշ շրջանում թարգմանչի հրատարակած այլ թարգմանությունների օրինակով: Մասնավորապես, թարգմանչի «թեթև ձեռքով» Յայաստան բառն անհետանում է նաև Ղազար Փարպեցու «Պատմութիւն Յայոց» (ըստ Թոմսոնի՝ “The History of Lazar P’arpec’i”), ինչպես նաև Ագաթանգեղոսի «Պատմութիւն Յայոց» (ըստ Թոմսոնի՝ “History of Armenians”) վերնագրերի թարգմանություններից<sup>10</sup>:

<sup>7</sup> Ст'я Банникова И. А. Интерпретация заглавия, начала и конца как особых компонентов текста // Вопросы стилистики. Саратов, 1992, էջ 64-71, Николина Н. А. Филологический анализ текста. М., 2003:

<sup>8</sup> Esat Uras, The Armenians in History and Armenian Question. Istanbul, Documentary Publication, 1988, pp. 3-15.

<sup>9</sup> Ст'я Lang David Marshal, Armenia: Cradle of Civilization. London, George Allen & Unwin, 1970, 328p., Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 126-128:

<sup>10</sup> Ст'я Thomson R. Agathangelos, History of Armenians. US, Albany, 1976, Thomson R. The History of Lazar P’arpec’i. Atlanta, Ga., 1991:

Թարգմանչի այս «ջերմեռանդ հետևողականությունը», իհարկե, անկատ չի մնում գիտական շրջանակներում<sup>11</sup>:

Պատմաբան Գ. Սարգսյանը, որը նաև երկի ռուսերենի թարգմանիչն է, իր թարգմանության ծանոթագրություններում հիմնավոր մեկնաբանություն է տալիս այն մասին, թե ինչո՞ւ Խորենացու երկի վերնագիրը հարկ էր թարգմանել ոչ թե որպես «Հայերի պատմություն», այլ «Հայաստանի պատմություն»: Բանն այն է, որ թեև դեռևս II դարում հայկական բարձրավանդակում և Եփրատի վերին հոսանքի հովտում ընկած տարածքների տարբերակմամբ պայմանավորված՝ ձևավորվել էին Մեծ Հայք, Փոքր Հայք անվանումները, սակայն պատմաբաղաբական զարգացումները հանգեցրին այն իրողությանը, որ Փոքր Հայքը ետ քաշվեց հին հայկական պետականության զարգացման հիմնական գծից, և Մեծ Հայք անվանումը, ձեռք բերելով ինքնուրույն նշանակություն, սկսեց գործածվել որպես հին հայկական պետության պաշտոնական անվանում: Անդրադառնալով Գառնիի պեղումների ժամանակ հայտնաբերված մ. թ. 77 թվականին վերագրվող հունարեն արձանագրության մեջ Տրդատ I թագավորի կողմից գործածված «*Αρμενία Μεγάλη*» (Մեծ Հայք) հիշատակությանը՝ պատմաբանը նշում է, որ այդ անվանումը հանդիպում է նաև այլ օտարալեզու (լատիներեն, պարսկերեն, վրացերեն, ռուսերեն) աղբյուրներում<sup>12</sup>: Ասվածը ցույց է տալիս, որ պատահական չպետք է համարել Ա. Մաթևոսյանի այն համոզմունքը, որ Խորենացու երկի բնագիր տարբերակում պատմագրության խորագիրն է եղել «Պատմութիւն Հայոց Մեծաց» (Մեծ Հայքի պատմություն), առավել ևս, որ Մաթևոսյանի համոզմունքը հիմնվում է Թովմա Արծրունու (9-10 դ.) և Արիստակես Լաստիվերցու (11 դ.) վկայությունների վրա<sup>13</sup>:

Պատմալեզվամշակութային այսօրինակ վկայությունների շարքին, ըստ էության, կարող են դասվել նաև «Հայոց Մեծաց» որոշչային բառակապակցության բազմաթիվ կիրառությունները ոչ միայն Մ. Խորենացու, այլ նաև ժամանակագրական առումով Խորենացուն նախորդած և հաջորդած պատմիչների երկերում: Մասնավորապես այս կապակցությունը կիրառվում է Մ. Խորենացու պատմության մեջ ինն անգամ (*Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց* (էջ 6), *գորիորդ Հայոց Մեծաց* (էջ 92), *գամենայն ընտիրս Հայոց Մեծաց* (էջ 96), *կատարեցան զիրք առաջին, ծննդաբանութիւն Հայոց Մեծաց* (էջ 106), *բովանդակեցան զիրք երկրորդ յառաջադիմութեան Հայոց Մեծաց* (էջ 304), *նախարարք Հայոց Մեծաց* (էջ 310), *Արշակ արքայ Հայոց Մեծաց* (էջ 342, 354), *աւարտեցան զիրք երրորդ յանկ ելանելոյ Պատմութեան Հայոց Մեծաց* (էջ 454)), Կորյունի կողմից հինգ անգամ (*Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց* (էջ 36), *Վռամշապիոյ արքային Հայոց Մեծաց* (էջ 50), *ի կող-*

<sup>11</sup> Տե՛ս, մասնավորապես, **Գ. Սարգսյան**, Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Եր., 1991, **Ա. Այվազյան**, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն), Եր., 1998, **Ա. Մաթևոսյան**, Մովսես Խորենացու պատմագրքի խորագիրը և ավարտման թվականը, «Էջմիածին», 1991, Թ-Ժ, էջ 84-93:

<sup>12</sup> Այդ մասին տե՛ս **Мовсес Хоренаци**. История Армении. Ер., 1990, էջ 217-218, **Ա. Երեմյան**, Մեծ Հայք, Հայկական սովետական հանրագիտարան, Եր., 1981, հ. 7, էջ 434-436:

<sup>13</sup> Տե՛ս **Թովմա Արծրունի**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Եր., 1985, էջ 85-122, **Արիստակես Լաստիվերցի**, Պատմութիւն Հայոց Մեծաց, Մատենադարան, ձեռագիր № 6457, տե՛ս նաև՝ **Ա. Մաթևոսյան**, նշվ. աշխ., Թ-Ժ, էջ 84-93:

մանս Հայոց Մեծաց (էջ 70), հազարապետ Հայոց Մեծաց (էջ 92) և այլն), Փ. Բուզանդի երկուն քսանհինգ անգամ (գորավար ամենայն Հայոց Մեծաց (էջ 28), Խոսրով, քազաւորն Հայոց Մեծաց (էջ 46), ի կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց (էջ 70), նախարարօքն ամենայն Հայոց Մեծաց (էջ 242) և այլն), Ագաթանգեղոսի պատմության մեջ տասնվեց անգամ (Տրդատ արքայ Հայոց Մեծաց (էջ 38), գօրօք երկիրս Հայոց Մեծաց (էջ 448), սպարապետն էր ամենայն գօրաց Հայոց Մեծաց (էջ 478) և այլն)<sup>14</sup>: Եվ քանի որ ցանկացած բնագիր, ստեղծվելով որոշակի պատմամշակութային պայմաններում, տվյալ իրադրության արդյունքն է և ձևավորվում է՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանում կուտակված պատմական ու մշակութային ավանդույթների վրա, ապա այդ ավանդույթների անտեսումը բնագրի ընկալման, հասկացման ու մեկնաբանման մեջ, առավել ևս բնագրի թարգմանությունն իրականացնելիս (որը նույնպես մեկնաբանության փորձ է) հարցը տանում է դեպի փակուղի:

Նշված որոշային բառակապակցության բազմապիսի կիրառությունների քննությունը հորիզոնական և ուղղաձիգ համատեքստերում կասկածի տեղ չի թողնում, որ բերված բոլոր դեպքերում **Հայոց Մեծաց**-ը Մեծ Հայք տեղանվան սեռականի գործածությունն է, իսկ, ինչպես վերը նշվել է, հին հայկական պետությունը մոտավորապես II դարից սկսած արդեն կոչվում էր Մեծ Հայք: Մեր այս համոզմունքը հաստատվում է նաև գրաբարին բնորոշ լեզվական մի քանի իրողություններով:

1. Եթե արդի հայերենում որոշիչն ու որոշյալը կապակցվում են առդրությամբ, ապա գրաբարի համար բնութագրական էր համաձայնությամբ ստեղծվող կապակցումը: Սրա պատճառն այն է, որ որոշիչի դերում հանդես եկող ածականը, թվականը և այլ խոսքի մասեր գրաբարում օժտված են եղել հոլովվելու ունակությամբ, և հոլովակարգը նրանց համար քերականական հատկանիշ էր, այլ ոչ թե գոյականացված գործածություն:

2. «Հայոց»-ը գրաբարում ներկայացրել է մի կողմից «հայք» (հայեր) հասարակ գոյականի, մյուս կողմից «Հայք» (տեղանուն) հատուկ անեզական գոյականի սեռականի հոլովածները:

3. Քանի որ գոյականի հետ կիրառվող հետադաս որոշիչը, ըստ գրաբարում ամրագրված կանոնի, հոլովով և թվով պարտադիր կարգով համաձայնեցվում էր որոշյալի հետ, «Հայք» անեզական գոյականի հետ գործածված «Մեծ» որոշիչը սեռական հոլովում դրվել է հոգնակի թվով (Մեծ Հայք → Հայոց Մեծաց):

Հետաքրքրական է, որ թարգմանիչը, զարմանալիորեն նահանջելով Մեծ Հայք տեղանունը որպես հայկական պետության պաշտոնական անվանում իր թարգմանության մեջ չարտացոլելու միտումնավոր գծից, պատմիչի կողմից գործածված «Հայոց Մեծաց» որոշչային բառակապակցությունը իր բոլոր կիրառություններում (բացի վերնագրից) երկի թարգմանության մեջ ներկայացնում է որպես Greater Armenia: Այսպես՝

<sup>14</sup> Հոդվածում օգտագործվել են հիշատակվող պատմիչների երկերի հետևյալ հրատարակությունները. Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց (քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի), Եր., 1981, **Կորյուն**, Վարք Մաշտոցի (քննական բնագիրը Մ. Աբեղյանի), Եր., 1941, Փալատոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց (բնագիրը Բ. Պատկանյանի), Եր., 1987, Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց (քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի), Եր., 1983:

Ծննդաբանութիւն <b>Ջայոց Մեծաց</b> , էջ 6	Genealogy of <b>Greater Armenia</b> , p. 63
զօրիորդ <b>Ջայոց Մեծաց</b> , էջ 92	The princess of <b>Greater Armenia</b> , p. 114
զամենայն ընտիրս <b>Ջայոց Մեծաց</b> , էջ 96	The elite of <b>Greater Armenia</b> , p. 114
Կատարեցան Գիրք Առաջին, Ծննդաբանութիւն <b>Ջայոց Մեծաց</b> , էջ 106	The end of the first book, the genealogy of <b>Greater Armenia</b> , p. 121
Բովանդակեցան Գիրք Երկրորդ Յառաջադիմութեան <b>Ջայոց Մեծաց</b> , էջ 304	End of the second book of the progress of <b>Greater Armenia</b> , p. 249
Նախարարք <b>Ջայոց Մեծաց</b> , էջ 310	The princes of <b>Greater Armenia</b> , p.254
Արշակ արքայ <b>Ջայոց Մեծաց</b> , էջ 342, 354	Arshak king of <b>Greater Armenia</b> , pp. 274,282
Աւարտեցան Գիրք Երրորդ յանկ ելանելոյ Պատմութեան <b>Ջայոց Մեծաց</b> , էջ 454	The end of the third book, bringing to conclusion the history of <b>Greater Armenia</b> , p.349

Բերված հատվածների թարգմանական և բնագրային տարբերակների զուգահրեայով քննությանը նույնպես հաստատվում է, որ «Ջայոց Մեծացը» բնագրում ոչ այլ ինչ է, քան Մեծ Ջայք տեղանվան սեռական հոլովի գործածությունը: Հակառակ դեպքում, օրինակ, տարօրինակ կլիներ «**զօրիորդ Ջայոց Մեծաց**»-ը (էջ 92) ընկալել որպես մեծ հայերի օրիորդ, կամ «**նախարարք Ջայոց Մեծաց**» (էջ 310)՝ որպես մեծ հայերի նախարարներ: Բերված լեզվական փաստերը կարող էին կարևոր կողմնորոշիչ դեր խաղալ վերնագրի համապատասխան թարգմանության հարցում, նույնիսկ եթե թարգմանչի օգտագործած բնագիր տարբերակում դուրս էր մնացել «Մեծաց» միավորը: Այլ կերպ ասած, ինչպես ցույց է տալիս պատմական և տեքստային փաստերի քննությունը, պատմիչը «Պատմութիւն Ջայոց» ասելով, անշուշտ, նկատի է ունեցել հենց Մեծ Ջայքի, այսինքն՝ Ջայաստանի պատմությունը:

Կողմնորոշիչ դեր կարող էին կատարել նաև անգլերեն թարգմանությանն ու նրա վերահրատարակությանը նախորդած տարբեր լեզուներով կատարված ամբողջական կամ մասնակի թարգմանությունները, գրաքննադատական բազմաթիվ ուսումնասիրությունները, որոնք խորենացու երկի վերնագիրը թարգմանում կամ վերծանում են որպես «Ջայաստանի պատմություն»: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Խ. Էմիլի և Գ. Սարգսյանի ռուսերեն, Մահեի ֆրանսերեն թարգմանությունները, Մովսես Խորենացու «Պատմություն Ջայոց» երկի՝ Ֆ. Կոնիբերի և Կ. Թումանովի գիտական ուսումնասիրությունները<sup>15</sup>: Հաշվի չառնելով նախորդ թարգմանիչների փորձը՝ Ռ. Թոմսոնը, կարելի է ասել, խախտել է թարգմանության տեսության մեջ վաղուց արդեն հաստատված բանասիրական մոտեցման սկզբունքը, համաձայն որի՝ յուրաքանչյուր հաջորդ թարգմանիչ պարտավոր է հաշվի նստել իր նախորդների փորձի հետ և, ըստ անհրա-

<sup>15</sup> Տե՛ս, մասնավորապես, Эмил Х. История Армении Моисея Хоренского. М., 1858, Саркисян Г. Мовсес Хоренаци, История Армении. Ер., 1990, Annie et J. P. Mahe', Moise de Khorene, Histoire de l'Armenie. Paris, Galimard, 1993, Toumanoff C. Studies in Christian Caucasian History. Georgetown, 1963, pp. 33-144, Conybeare, The Date of Moses of Khoren, Byzantische Zeitschrift, 1901, № 10, pp. 489-504, Toumanoff C. On the Date of Pseudo-Moses of Chorene. Handes Amsorya, № 10 (75), 1967, pp. 467-471 և այլն:

ժեշտության, «փոխառել» նրանց կողմից արդեն ճշգրտված ու մեկնաբանված որոշ արտահայտություններ<sup>16</sup>:

Եվ այսպես, կարելի է նկատել, որ երկի վերնագրի համարժեք թարգմանությունը, տարաբնույթ գործոններով պայմանավորված, բարդ գործընթաց է, որն իր որոշակի պահանջներն է թելադրում թարգմանչին, և վերջինս պարտավոր է բավարարել դրանք, եթե նպատակադրված է կատարել իր բուն առաքելությունը՝ օբյեկտիվորեն վերարտադրել բնագիրն իր իմաստառճական յուրահատկություններով հանդերձ՝ առավելագույնս օգտագործելով թարգմանության լեզվի հնարավորությունները: Ո՛չ թարգմանության տեսության ու պատմության բազմահարուստ փորձը, ո՛չ էլ թարգմանություն հասկացության՝ բառարաններում առկա սահմանումները նրան իրավունք չեն վերապահում խմբագրելու բնագիրը:

Հաջողված թարգմանության հասնելու կարևոր նախապայման է նաև աղբյուր լեզվի յուրահատկություններին տիրապետելը, որն առաջին կողմնացույցն է թարգմանության լեզվում բառային, քերականական, ոճական համապատասխանություններ գտնելու ճանապարհին: Ու թեև թարգմանությունն ինչ-որ առումով մեկնաբանություն է, որը թույլատրում է որոշակի սուբյեկտիվիզմի առկայություն, սակայն չի կարող անտեսվել այն կարևոր հանգամանքը, որ սուբյեկտիվի ներթափանցման հնարավորությունները սահմանափակվում են բնագրում գործածված լեզվական միավորների իմաստներով, որոնք թարգմանության ընթացքում թարգմանչի և հեղինակի ընկալումներն իրար մոտեցնող օբյեկտիվ փաստեր են<sup>17</sup>:

Էսպես կարևորվում է նաև պատմաբանասիրական լայն համատեքստի լեզվական ու արտալեզվական հնարավոր գործոնների հաշվառումով:

Այսպիսով, քննության առարկա երկի վերնագրի և դրա անգլերեն թարգմանության պատմաբանասիրական ուսումնասիրությունը անվերապահորեն հաստատում է այն համոզումները, որ Մ. Խորենացու երկի վերնագիրը կարող է ունենալ միայն մեկ՝ պատմականորեն ու լեզվական իրողություններով հիմնավորված համապատասխան թարգմանություն, այն է՝ "History of Armenia" («Հայաստանի պատմություն»): Պատմական և լեզվական փաստերի համակցված քննությամբ բացահայտվում է օբյեկտիվ իրողություններն աղավաղելու թարգմանչի միտումը, որն ակնհայտորեն ուղղված է ծառայելու թուրքական պատմագրության մեջ գերակայող թյուր ու չիմնավորված այն գաղափարախոսությանը, թե հայերի էթնիկ ծագումնաբանությունը ոչ մի կապ չունի Armenia աշխարհագրական տարածքի հետ<sup>18</sup>:

<sup>16</sup> Հայտնի է, որ դեռևս 19-րդ դարում ընդունված է եղել կարևորել նախորդ թարգմանիչների փորձը և իմաստավորել նրանց ձեռքբերումները (տես **Аверкиев Д. В.** Вильям Шекспир. М., 1864, էջ 218, **Гомер.** Илиада. М.–Л., 1949, էջ 6–7):

<sup>17</sup> Տե՛ս **Гумбольдт В.** Избранные труды по языкознанию. М., 1984: Տե՛ս նաև **Gasparyan S.** On Objectivity of Understanding Verbal Art. // The Knowledge of Literature, vol. V. / Ed. by A. Locatelli. Bergamo 2006, էջ 67-72:

<sup>18</sup> Տե՛ս **Kamuran Gurun,** The Armenian File. New York, St. Martin's Press, 1985, էջ 1-9, **Esat Uras,** նշվ. աշխ., էջ 3-15: Այս մասին տես նաև **Walker Chr.** The Armenians in History and the Armenian Question by Esat Uras. An English Translation of the revised and expanded second edition, էջ XIV, 1048, Ankara, Documentary Publications, 1988, Journal of the Royal Society, 1990, № 1, էջ 166, **Ա. Այվազյան,** նշվ. աշխ., էջ 38-39:

**СЕДА ГАСПАРЯН, ЛУИЗА ГАСПАРЯН – Заглавие "История Армении" Хоренаци и его английский перевод.** – Работа посвящена изучению "Истории Армении" Мовсеса Хоренаци и его английскому переводу. Общеизвестно, что это произведение – неисчерпаемый источник сведений о событиях и персонажах, сыгравших важную роль в жизни армянского народа до V века н. э. К сожалению, единственный английский перевод книги, выполненный Р. Томсоном (он увидел свет в 1978 г. и переиздан в 2006-м), оставляет желать лучшего.

Основное внимание в статье обращено на заглавие произведения, чрезвычайно важное с точки зрения как исторической информации, так и стилистической уникальности, и на его перевод. Историко-филологическое исследование, учитывающее лингвистические и экстралингвистические факторы, показывает, что перевод Томсона лишён всякой научной обоснованности и требует пересмотра.

**SEDA GASPARYAN, LUIZA GASPARYAN – The title of Khorenatsi's "History of Armenia" and its English translation.** – The paper seeks to study Movses Khorenatsi's "History of Armenia" - an impeccable piece of historical literature, where the historian presents the history of Armenia up to the 5<sup>th</sup> century with scientific objectivity and truthfulness. However, the focal issue in the paper is the title of the work, the English translation of which by R. Thomson leaves much to be desired.

The research carried out along the lines of historical-philological research reveals linguistic and extra-linguistic factors which, not infrequently, reveal the absolute and intended inadequacy of the English translation intended to meet the requirements of pro-Turkish ideology.